

ԳԻԼԱՆԻ ՀԱՅԵՐԸ

Գիլան նահանգը Պարսկաստանի ամենահարուստ նահանգներից մէկն է: Հին ժամանակներից այստեղ եղել է հայ գաղութ, բեկորները զանազան փոփոխութիւններով հասել են մինչև օրս: Թէև այդ հին բնակիչներից այժմ շատ քչերն են մնացել, բայց ներկայումս շատ տեղերից հաւաքւում են այստեղ հայեր, խառնւում այդ մնացորդներին և կազմում Գիլանի հայ գաղութը: Արժէ մի փոքրիկ ծանօթութիւն այս նահանգի և նրա բնիկների մասին և ապա անցնել հայերին. դրանով աւելի կպարզուի, թէ ինչու հայկական կենտրոններից կտրուած, կղզիացած այդ երկրից հայերը չեն կտրուում և իրանց բախտը փորձել են բոլոր ժամանակներում:

Գիլան կամ Գելան նահանգը ընկնում է Կասպից ծովի հարաւարեմտեան ափին: Ունի 11,000 քառ. կիլոմետր տարածութիւն, Ռուսաստանից բաժանւում է Աստարա գետով և տարածւում դէպի արեւելք մինչև Տեմիշէ. 220—300 կմ. լայնութիւն ունի Էլբուրս լեռնաշղթայից մինչև Էնզելիի ծոցը: Գիլանը ներկայացնում է ճահճային մի հարթութիւն, ծածկուած խիտ անտառներով, որոնց մէջ ծածկուած են գիւղերը. բազմաթիւ մանր և կարճ գետեր թափւում են Կասպից ծովը, դրանցից իւր մեծութեամբ և առատ ձկներով նշանաւոր է Սէֆիտ-րուտը: Լեռնային ստորոտներում բուսականութիւնը փարթամ է, հարուստ է այգիներով և պտղատու ծառերով, իսկ դաշտային մնացած մեծ տարածութիւնը բնակուած է ամբողջապէս բրնձի արտերով և թթենիներով: Կլիման խոնաւ, փոփոխական և վատաւողջ է: Սեպտեմբերից մինչև ապրիլ անձրեային շրջան է համարւում. անձրեւներ գալիս են շաբաթներով անընդհատ, ծածկում են ջրերով տարածութեան մեծ մասը: Դեկտեմբերի վերջերին և յունուարին գալիս է անձրեախառն ձիւն, որը շուտով վերցւում է: Ֆլորան և ֆաունան (բոյսերը և կենդանիները) ասիական են, անտառներում յաճախ պատահում են մեծամեծ կաղնիներ. անտառներում և շամբուտներում խմբե-

րով թափառում են վագրեր, ընձառիւծներ, լեռնային ոչխարներ և վայրի խոզեր: Թէ վայրի թէ ընտանի խաղող ամետեղ լիքն են, բայց ընդհանրապէս պտուղները շատ վատ տեսակի են պատկանում: Հացահատիկներից ցանում են ցորեն, գարի (սահմանափակ քանակութեամբ) և բրինձ, որը մեծ արտահանութիւն ունի: Շերամապահութիւնն շատ զարգացած է և գրեթէ բոլոր բնակիչները պարասում են դրանով: Այժմ մեծ քանակութեամբ գործարաններ են հիմնել Գիւլանի կենտրոններում՝ յոյները, եւրոպացիները, հայերը և պարսիկները: Տարեկան 5,800,000 բութով մետաքսէ արտահանւում այս նահանգից: Մեծ քանակութեամբ մշակւում է այստեղ ընտիր ծխախոտ և բամբակ: Ընդհանրապէս շերամի, բամբակի, բրնձի, ծխախոտի արտահանութիւնից տասնեակ միլիոն դրամ է թափւում այս նահանգը: դրանով է բացատրւում, որ այս նահանգի բոլոր բնակիչները համեմատած Պարսկաստանի միւս բնակիչների հետ բարեկեցիկ են և հարուստ:

Եթէ հոգ տարուի այս երկրի բարեկարգութեան վրայ, մեծամեծ օգուտներ և արդիւնքներ կարելի է ստանալ. մինչև այժմ բոլորը գրեթէ նահապետական ձևով է կատարւում:

Գիւլանի բնակիչները հաշւում են 150—260,000, որոնք իրանական ցեղի հին բնակիչների, քուրդերի ու թիւրքերի խառնուրդից են առաջացած. խօսում են պարսկերէնի մի բարբառով, որը «Գիւլաբի» է կոչւում:

Ժողովրդի գլխաւոր անունըն է բրինձը և կանաչեղէն, բնակչութեամբ շատ խաղաղեն, աշխատասէր և ոչ մոլեռանդ:

Գիւլանը մինչև XVII-րդ դարը փոփոխակի պատկանել է տաճիկներին և պարսիկներին. XVIII-րդ դարի սկզբներում կարճ ժամանակով անցաւ ուսմաների ձեռքը, դրանից յետոյ 1732 թուին (Նադիր շահի օրով) վերջնականապես անցաւ պարսիկների ձեռքը: Գիւլանի վրայով է անցնում հարաւարեւելեան եւրոպայի ճանապարհը դէպի Կենտրոնական Ասիա և Հնդկաստան: Կասպից ծովի հարաւային ափով ձգւում է Բուխարայի, Հերաթի, Կազգարի և Հնդկաստանի ամենակարճ ճանապարհը և ժամանակով մեծ ապագայ է խոստանում այս երկրին:

Մինչև 1870-ական թուականները ուսմանը անջնային մեծ յարաբերութեան մէջ չէին պարսիկների հետ, միայն այդ թուականից սկսուեց ուսական ապրանքների ներմուծումը Էնդելիի վրայով Պարսկաստան և այժմ գրեթէ հիւսիս-արեւմտեան Պարսկաստանի շուկաները բռնել է ¹⁾:

¹⁾ Թուրք և մի քանի տեղեկութիւններ քաղել եմ Մելգունովի գրքից:

Տնտեսական բարեկարգութան չէ համապատասխանում ժողովրդի մտաւորը, որը շատ յետ է: Ամբողջ նահանգում չկայ մի կանոնաւոր դպրոց, իւրաքանչիւր մօլլա գիւղում թէ քաղաքում հաւաքում է իւր գլխին մի քանի մանուկների և սովորեցնում «զորանք»: Վերջին տարիներն Ռաշտում բացուեցին երկու դպրոցներ եւրոպական տիպի, այսինքն աշակերտները նստում են նստարանների վրայ, դասաւանդում է ուսերէն և ֆրանսերէն լեզուներ, թուաբանութիւն, աշխարագրութիւն: Դրանցից մէկը, «Մուզաֆէրիէն» պետական դպրոց է, բայց նիւթականի պակասութեան պատճառով ուսուցիչները ամիսներով չեն ստանում իրանց ուժիկները, որոնք հաւաքում են հարուստներից իբրեւ նուէրներ: Ուսուցիչները դարձեալ նոյն մօլլաներն են, միայն դիրեքտորը ինչոր պարսկական դնդապետ է: Այդ դպրոցը համապատասխանում է մեր երկրասեան կամ երեք դասարանեան դպրոցներին: Միւս դպրոցը աւելի ցած է և ընդհատուիներով է շարունակուում: Ամբողջ նահանգի լուսւորութիւնը այս երկու հիմնարկութիւններից պիտի տարածուի: Այս է ահա Գիլանի ընդի ժողովուրդի տնտեսական և մտաւոր վիճակը: Այստեղ կան փոքր քանակութեամբ հրէաներ ու ցիգաններ: Պարսիկներից յետոյ երկրորդ տեղը իրանց թուով ու խաղացած դերով բռնում են հայերը:

Հայերը հաւաքուած են երկու կենտրոններում, Ռաշտում և Էնզէլիում: Էնզէլիի հայերն շատ քիչ են, ընդամենը հազիւ մի 30—35 տուն լինեն: Սրանք ունեն իրենց դպրոցը (մի դասեան), ուր սովորում են 20 աշակերտ-աշակերտուհիներ, զբւրաւարան ընթերցարան, փոքրիկ թատրոնական սրահ և բեմ, ուր սիրողները ներկայացնում են և երեկոյթներ են տալիս յօգուտ տեղական հասարակական հիմնարկութիւնների:

Հայերի մեծ մասը հաւաքուած են Ռաշտ քաղաքում, որը Գիլանի կենտրոնն է, ուր ամփոփուած են նահանգի կառավարութեան բոլոր հիմնարկութիւնները: Քաղաքը ընկած է մի հարթ տարածութեան վրայ, որը զեղեցիկ կերպով մշակուած է: Ունի 40—50 հազար բնակիչ, հայերը և օտարազգիները ազգաբնակչութեան ամենաչնչին մասն են կազմում, թէև սրանց թիւը տարեց տարի աւելանում է: Գիլան նահանգի հարստութիւնը, Ռաշտի, առևտրական տեսակետից, յարմար դիրքը, դէպի իրան է ձգուած թէ հայերին և թէ եւրոպացիներին:

Ռաշտը Պարսկաստանի հին և վաճառաշահ քաղաքներից մէկն է շատ հին ժամանակներից: XVIII դարի սկզբներից դեռ յիշուում էր այս քաղաքը իբրեւ մի առևտրական կենտրոն: Լինելով Կասպից ծովի ափին (10—12 վերստ հեռու ծովից),

սրա վրայով էր գլխաւորապէս կատարուում Պարսկաստանի, Ռուսաստանի և վերջինիս վրայով Եւրոպայի վաճառականութիւնը: Պետրոս Մեծի արշաւանքների ժամանակ Գիւլան նահանգի հետ այս քաղաքն ևս անցնում է ռուսաց ձեռքը և դառնում ռուսաց և պարսից դիպլոմատիայի կենտրոնը: Այստեղ էին պատրաստուում և ստորագրուում յիշեալ պետութիւնների մէջ զանազան դաշնագրեր: Պետրոս մեծի յաջորդների ժամանակ նորից Ռաշտն անցնում է Պարսից ձեռքը Նադիր շահի օրով 1732 թւին: Դեռ այս ժամանակ նոյն իսկ յիշուում է, որ Ռաշտում գտնուում էին բաւականին հայեր, որոնք հաստատուել էին այստեղ առևտրական և ուրիշ նպատակներով: Այդ ժամանակներից մինչև այժմ հայ գաղութը գոյութիւն ունեցել է Ռաշտում, երբեմն մեծացել է դա, երբեմն փոքրացել՝ նայելով Պարսկաստանի ուժի մին և տիրող դրութեանը: Այժմ նկատելի է, որ հայերը արագ կերպով շատանում են այստեղ: Եկուորներն թէ Պարսկաստանի և թէ Ռուսաստանի զանազան տեղերից են, որոնց թիւը կլինի 90—100 տուն, և որոնք պարապում են վաճառականութեամբ, արհեստներով և ոգելից խմիչքներ ծախելով, (վերջիններով պարապում են բուն տեղացի մի քանի ընտանիքներ և Սպահանից ու Համադանից եկածները):

Ջնայելով Ռաշտի հնութեանը, իր դիրքին ու կատարած դերին, մինչև այժմ էլ սա մի անշուք, պարսկական տրպի քաղաքէ դեռ մնացել: Նոյն սովորական նեղ ու կեղտոտ փողոցները, անշուք տները, մեծ մասը մի յարկանի, այն տարբերութեամբ միայն, որ տները չեն շրջապատուած այստեղ մի տեսակ հարեմական անթափանցելի պատերով, որպէս յատուկ է պարսկական քաղաքներին: Լուսամուտները, պատշգամբները նայում են փողոցների վրայ և դա այստեղ չէ գայթակղեցնում «ղուրանի» հետևողներին: Ընդհանրապէս այսկողմերի մահմեդական տարրը աւելի հանդարտաբարոյ և խաղաղ է, չունի այն խիստ մոլեռանդութիւնը և գիշատիչ յատկութիւնները, որոնք յատուկ են Ատրպատականի և Կովկասի մահմեդական բնակիչներին:

Պարսկաստանի մէջ ժողովրդական շարժումները ամենից առաջ սկսուել են Ատրպատականում: Այս նահանգի հայ տարրը աւելի՝ բախտաւոր է եղել, քան Պարսկաստանի միւս մասերի հայը: Այստեղի հայը աւելի շուտ է քնից արթնացել, դպրոցների և հասարակական գործերի մասին մտածել: Լինելով Պարսկահայոց ամենահայաշատ նահանգը, սահմանակից լինելով Ռուսահայոց և Տաճկահայոց, բնական է որ այս տեղի հայը աւելի պիտի ազդուէր իւր հարեան արիւնակիցներից, որոնց

մտաւոր և հասարակական կեանքը անհամեմատ աւելի առաջ էր գնացել: Եւ պարսկահայերի մտաւոր վերածնութիւնը, եթէ կարելի է այդ ասել, գլխաւորապէս եղել է ռուսհայոց ազդեցութեան տակ և այս ազդեցութիւնից աւելի պիտի օգտուէր սահմանակից ամենամօտիկ նահանգը—Ատրպաժականը:

Այս նահանգում իրանց գործունէութիւնը սկսեցին այն ռուսահայ գործիչները, որոնց նպատակն էր նպաստել Պարսկահայոց կրթական գործին: Շուտով սրանց միացան և այն անհատներն ու խմբերը, որոնք եկել էին այդ տեղ պատրաստել հող և ճանապարհ ժողովրդի ապագայ բարօրութիւնների համար...

Այդ շարժումները բաւական ուշ թափանցեցին Պարսկաստանի միւս մասերում: Թէհրանի և Ն. Զուլայի նման կենտրոններում հայերը բաւական յետ մնացին Ատրպատականից. հւր մնաց միւս երկրորդական մասերը, ինչպիսիք են Համադան, Գիլան և այլն: Վերջիններից շատերը դեռ մինչև օրս էլ խղճալի դրութիւն են ներկայացնում իրանց մտաւոր վիճակի կողմից:

Ռաշտ քաղաքի հայերը, ինչպէս և Գիլանի միւս տեղերի հայերը, շնորհիւ երկրի դիրքին և իրանց տնտեսապէս աւելի բարեւոք դրութեանը, պէտք էր սպասել, որ աւելի արդիւնք ցոյց տուած պիտի լինէին, դրանց մտաւորը, հասարակական գործերը աւելի նախանձելի վիճակի մէջ պիտի լինէին, բայց ցաւելով պիտի ասել, որ Ռաշտի հայը չէ կարողացել օգտուել ոչ իւր դիրքից և ոչ տնտեսական լաւ դրութիւնից:

Մինչև շատ մօտ ժամանակներս Ռաշտի հայ ժողովրդի կեանքը եղել է միօրինակ, քնած վիճակում, որպիսին է այժմ նրան շրջապատող ժողովրդի կեանքը: Այդ խաղաղ նինջի շրջանում երբեմն-երբեմն ընկել են այս տեղ թոյլ կայծերի նման զանազան գաղափարներ, առաջացրել են անհատների մէջ տրամադրութիւն՝ կազմակերպել այս ինչ կամ այն ինչ հասարակական հիմնարկութիւնը, կամ եղածը բարեփոխել, բայց շուտով հանգել են, կայծերը ոչնչացել, տրամադրութիւնները և կեանքը իւր սովորական կերպարանքն է ընդունել:

Թուենք Ռաշտում եղած հայերի հասարակական հիմնարկութիւնները՝ վաղուց է, որ այս քաղաքի հայերը կազմել են «Տօտտերասիրաց» անունով մի ընկ., որի նպատակն է նպաստել ներկայացումների միջոցով ժողովրդի կրթութեանը և շնորհիւ ընկերութեան վարիչների անպատրաստութեան և անհոգութեան ոչ միայն չեն իրականացրել ընկ. նպատակը, այլ և դարձրել են այս հիմնարկութիւնը մի մեռած մարմին, որը անունով միայն գոյութիւն ունի:

Մենք ծանօթացանք ընկերութեան թատերասրահի, բն-
մի հետ. որչափ ողորմելի է դրանց պատկերը, նոյնչափ ողոր-
մելի է խղճալի են մնացած անհրաժեշտ պատրաստութիւնները
—հագուստները, գրիմի պարագայքը և այլն: Եթէ որեւէ
ներկայացում ցանկանան տալ, չունեն կանոնաւոր պիէսաներ
և մէջ տեղ են բերում անդրջրհեղեղեան պիէսաներ, ընտրում
մէկը և ներկայացնում: Հետեանքը լինում է այն, որ այդպիսի
ներկայացումներով կերակրելով հասարակութիւնը, ընկերու-
թիւնը պատճառ է դառնում ժողովրդի մէջ թատրոնի դադա-
փարի սխալ հասկացողութիւն կազմելուն, որը նայում է գե-
ղարուեստին, այդ կրթական հիմնարկութեանը, որպէս մի
ցիրկի, օլիմպադոնի վրայ: Սրա վրայ աւելացրէք և այն,
որ յաճախ կանացի դերեր կատարում են տղամարդիկ: Տեղա-
կան տարրը բնւոր բարձրացող կնոջ վրայ «ծուռ» աչքով է նայ-
ում, իբրև ոչ «բարոյական գործի» և զլանում է կանացի ոյ-
ժեր տալը:

Թէ քանի տարի է որ «Թատերասիրաց» ընկ. գոյութիւն ունի,
ես չկարողացայ իմանալ, որովհետև չկան մէջտեղ ոչ տեղեկա-
գրեր և ոչ էլ որեւէ դոկումենտներ: Նոյնպէս ճիշտ կերպով
չիկարելի գաղափար կազմել նրա անձաց գործունէութեան և
դրամական հաշիւների մասին: Սա միայն յայտնի է, որ ըն-
կերութիւնը ունի մի քանի հարիւր թուական փող (գումարը
այժմ յայտնի չէ), տրուած տոկոսով. թէ երբ է այդ փողը յան-
ձնուել հոգաբարձութեան, ինչ հաշիւներով, ինչ պայմաննե-
րով յայտնի չէ: Ընկերութիւնը իւր ձեռքին չունի դոկումենտ-
ներ, հաշուէտութիւն չէ եղել և յայտնի չէ թէ այդ գումարը
որքանի է հասել: Միայն այսքան է յայտնի, որ այդ փողը
հոգաբարձութեան է յանձնուած իբրև ֆօնդ (միւս գումարների
հետ), տղայոց դպրոցի շէնքի համար, այն պայմանով, որ ընկե-
րութիւնը իրաւունք ունենայ օգտուելու ձրիապէս դպրոցի
թատերասրահից: Բայց քանի որ այժմ ոչ դպրոցն է շինուած և
ընկ. վարչութիւնն էլ կազմալուծուած է և ամեն ինչ երեսի
վրայ ձգած առանց հետաքրքրութեան, հետևապէս, ամեն ինչ
կիմայ անորոշութեան մէջ, մինչև..... այս միջնելով ով որքան
կուզէ թող այնչափ ընդունէ:

Մի քանի տասնեակ տարի է, որ գոյութիւն ունի այս-
տեղի հայոց հասարակական գրադարան-ընթերցարանը, որը
հիմնուած է զարկ տալու և նպաստելու ժողովրդի ինքնակրթա-
կան գործին: Թէ ժողովուրդը որքան է օգտուել այդ հիմնարկու-
թիւնից և որչափով է ինքնակրթութեւր—այդ երևում է նրա
վերաբերմունքից դէպի հիմնարկութիւնը և այն աննախանձելի

վիճակից, որի մէջ այսօր գտնուում է նա: Մինչև 1899 թիւը դրադարան-ընթերցարանը կառավարուել է առանց որևէ կանոնադրութեան, ընկած է եղել զանազան վարչութիւնների ձեռքը, որոնցից անցել է պատահական, ոչ ընտրովի անհատների ձեռք, որոնք առանց որևէ խղճի խայթի, ուղղակի բարբարոսական կերպով են վարուել մի հասարակական սեփականութեան հետ և նրան կատարեալ քայքայման ենթարկել: Չէ հղել կանոնաւոր հաշուէտութիւն անյայտացրել են գրադարանից ամենալաւ գրքերը, նոյնիսկ աթոռները: Բաժանորդները չեն վերադարձրել տարած գրքերը և 98-ի Գննիչ յանձնաժողովը ստիպուած է եղել մի յայտարարութիւնով դիմել հասարակութեանը և խնդրել, որ վերադարձնեն գրադարանի գրքերը և յայտնեն յանձնաժողովին, թէ ո՞վ, ո՞րտեղ տեսել է գրադարանին պատկանող գիրք (որովհետև նշանակուած չէ եղած գիրք տանողների աւուրները): Կողոպուտը կատարեալ անելու համար, գրադարանի ցուցակից «ղեկավարները» պատուում են 16 թերթ, որ յայտնի չլինի անցած դարձածը:

Այս դրութեան մէջ քաշ է գալիս գրադարան-ընթերցարանը մինչև 98 թուական, երբ նրա գրապահը անձնասպան է լինում և գրադարանն էլ փակուում է մի քանի ամսով: Գրադարանի բալանիքները և եղած դրամները ընկնում են ուսաց հիւպատոսարան, գրքերը մնում են գրաւ տեղական վաճառականներից մէկի մօտ, իւր քարվանսարայի վարձի դիմաց մինչև վճարելը: Այս բոլորից յետոյ նոր է հասարակութեան կողմից մի յանձնաժողով ո՞ւղարկուում գրադարանի քայքայուած դործերը կարգի դնելու:

1904 թուի վարչութիւնը աւելի գործունեայ է գտնուել իւր նախորդներից. չնայելով այն քայքայուած դրութեան, որի մէջ գրադարանն էր գտնուում, վարչութիւնը ոչ մի աշխատանք չընկնայեց նրան քիչ թէ շատ կանոնաւորելու. և այդ յաջողուեց նրան մասամբ:

Այս վարչութեան ներկայացրած տեղեկագրից երևում է¹⁾ որ տարուայ ընթացքում գրադարանը մուտք է ունեցել 1381դ. 70կ. (մօտ 200 բուքի) և ծախք՝ 1283դ. 60կ. (185 բուք.): Ընթերցարանը ամեն օր ունեցել է յաճախորդներ 5-10 հոգի. գրադարանից օգտուել են 90 հոգի:

Հայերէն	գրքեր կարդացուել է ընդամենը	1473 կտոր
Ռուսերէն	»	» 58 »
Յորանսերէն	»	» 15 »

¹⁾ Այս առաջին վարչութիւնն է, որ ժողովրդին կանոնաւոր կերպով աշխ է տալիս:

Դրադարանն ունի հայերէն գրքեր	686 »
Ամսագրներ և լրագրներ	182 »
Ռուսերէն գրքեր և ամսագրեր	285 »
Ֆրանսերէն » »	117 »
Դերմաներէն » »	31 »
Անգլիերէն » »	18 »

Ընդամենը 1318 կտոր.

Դրադարան-ընթերցարանը զետեղուած է մի խոնաւ նկուղի մէջ, որտեղ երբէք լոյս չէ թափանցում, եթէ կարիք լինի ցերեկները օգտուելու ընթերցարանից, պիտի անպատճառ լամպաները վառել: Բացի այդ, մթութեան այնպիսի սոսկալի խոնաւութիւն ունի այդ նկուղը, որից փթում են արագ կերպով գրքերը, որոնք տեղաւորուած են պատերի դարակներում:

Բնական է, որ այսպիսի ընթերցարանից օգտուել չի լինի և նոյնիսկ վտանգաւոր էլ է նստել դռնէ մի ժամ, մանաւանդ ձմեռ ժամանակ: Դրադարանը ունի 414 թուման (750 ռուբլի) փող հոգաբարձութեան մօտ, որը թողնուած է իբրեւ ֆօնդ՝ տղայոց շէնքից մի սինեակ յատկացուի գրադարանի համար: 5—6 տարի է անցել այդ օրից և դեռ ոչ դպրոցն է շինուել, ոչ էլ գրադարանը օգտուել: Այժմ, երբ դպրոցի շինելուն ձեռնարկել է պր. Ա. Յորդանանեանը, կարծեմ ժամանակ է և այս խնդիրը կարգադրել և գրադարանը ազատել այդպիսի նկուղներից, ապա թէ ոչ ներկայ պայմաններում նա չէ ծառայում իւր նպատակներին:

Այժմ գրադարանը ստանում է Կովկասի և արուսեմանեան հայ թերթերը, իսկ ռուսականներից ստանում է միայն «Рус. Вѣд.» և «Русская Мысль»:

Պարսկահայ կանանց մէջ տասնեակ տարուց ի վեր է մի շատ համակրելի գործունէութիւն է սկսուած, որը արժանի է ամենայն քաջալերութեան և աջակցութեան: Դա այն բարեգործական հիմնարկութիւններն են, որոնք հետզհետէ կազմում են Պարսկաստանի զանազան քաղաքներում այս երկրի հայուհիների ջանքերով: Թէ որչափ կարօտ են այդ բարեգործական ընկերութիւններն ու հիմնարկութիւնները ժողովրդի թէ կրթական և թէ այլ կարիքների համար, թէ որչափ ժամանակակից պահանջ է և կարիք կանանց գործունէութիւնը հասարակական ասպարիզում նպաստելու կրթական գործին՝ դա կզգայ ամեն մէկը, ով մի անգամ կփորձի հետաքրքրուել պարսկահայոց կրթական գործով, կփորձի ծանօթանալ կանանց գործունէու-

Թեանը այդ ասպարիզում: Այսօր, համարեա Պարսկաստանի ամեն մի քաղաքում, ուր հայի համայնք գոյութիւն ունի, որը ունի իւր դպրոցը, իսկոյն նրա կողքին էլ կազմուած է կանանց որեւէ ընկերութիւն՝ նպաստելու այդ դպրոցին, յատկապէս իգական սեռի կրթութեանը: Այդպէս է ամեն տեղ, Թաւրիզ, Թէհրան, Ռաշտ, Ջուղա. Սալմաստ, ամեն տեղ, ուր ժողովուրդը բիշ Թէ շատ զգացել է կրթութեան անհրաժեշտութիւնը:

Բարեգործական այս հաստատութիւններում պարսկահայ ուհին պակաս դեր չէ կատարել կրթական ասպարիզում: Ինչ կլինէր այն դպրոցների դրութիւնը, որոնք նիւթական կողմից սաստիկ անապահով դրութեան մէջ են գտնուում, եթէ դրանց օգնութեան չհասնէր կինը իւր այդ հիմնարկութիւնովը: Ես կրկնում եմ, կինը Պարսկաստանում, այս ասպարիզում տղամարդուց շատ աւելի եռանդ է արդիւնաբեր գործունէութիւն է ցոյց տուել: Միայն մի պակասութիւն կայ, որ նոքա իրանց ձգտման է եռանդի համեմատ չունեն մտաւոր պատրաստութիւն է ինքնուրոյն կերպով չեն կարողանում ղեկավարուել, որի պատճառով յաճախ զանազան անձերի են ենթարկւում, որոնք շատ դէպքերում ի չարն են գործ դնում իրանց խորհուրդները:

Կանանց մի բարեգործական ընկերութիւն էլ ահա այսօր, Ռաշտումն է հիմնուած 1899 թւականից: Չէ կարելի չըխոստովանուել, որ այստեղի կանանց ընկերութիւնը շատ մեծ ծառայութիւններ է արել դպրոցներին: 99 թւականից նա իւր հովանաւորութեան տակն է առել օրիորդաց դպրոցը, վճարել է նրա ամբողջ ծախսերը մինչև 1903/4 ուս. տարեշրջանը: Սրա պահած դպրոցը շնորհիւ նիւթականի՝ ապահովութեան աւելի բարեկարգ դրութեան մէջ է եղել քան տղայոց դպրոցը, որ հասարակութեան խնամքին է թողնուած եղել: Այս ընկերութիւնը գործել է իւր դրամագլխի համաձայն սահմանափակ շրջանում — այն է նպաստել տեղական օրիորդաց Մարիամեան դպրոցին, ինչպէս գրում է նա իւր կանոնադրութեան § 1-ում:

Թէպէտ ընկերութեան նպատակը եղել է աւելի ընդարձակ գործունէութիւն, այնէ՛ բացի օրիորդաց դպրոց կառավարելուց է ունենալ մի ժանկապարտէզ, կարուձևի արհեստանոց, ժողովրդական աղէտների ժամանակ ճնշաստել չարիքի մեղձանալուն», օգնել թշուառ ընտանիքներին նիւթապէս և բարոյապէս, օգնել այլ անղերի հայ դպրոցներին, առաջադէմ աշակերտ-աշակերտուհիներին միջոցներ տալ շարունակելու իրենց ուսումը, բայց այս բոլորից, ընկ. դեռ միայն օրիորդաց դպրոցին է օգնել: Հանգամանքներին ծանօթ մարդը շատ գոհ է

լինում ընկ. և այս գործունէութեամբ, եթէ դա կանոնաւոր և տեւական կատարուի: Ընկերութիւնը իւրաքանչիւր տարի ծախսել է դպրոցի վրայ 600—700 թուման (ներկայ կուրսով մօտ 2000—2150 բուրլի), իհարկէ դպրոցի վիճակախաղի, թոշակների և մի քանի խանութների վարձը և արդիւնքն ինքն է ստացել:

Ինչպէս տեսնում է ընթերցողը, Ռաշտի հայերի համար, այս ընկ. գոյութիւնը և գործունէութիւնը չափազանց կարևոր է: Այժմ տեսնենք թէ ինչպէս է դեկավարուել և կառավարուել ընկերութիւնը և ինչ դրութեան մէջէ գտնուում նա այժմ:

Ընկերութեան վարիչ մարմինն է վարչութիւնը, որը ընտրւում է ընդհանուր. ժողովի կողմից երեք տարի ժամանակով: Թէ այժմ որչափ դրամագլուխ ունի ընկերութիւնը և ինչ պայմաններում է գտնուում յայտնի չէ, որովհետեւ ընկերութիւնը չէ տուել ոչ հաշիւ և ոչ տեղեկագիր, որից հնար լինի քաղել տեղեկութիւններ: Որքան կարողացայ ես տեղեկանալ, ընկ. միմիայն առաջին տարին է հաշիւ տուել, որով նա այդ թւի վերջում (99 թ.) ունեցել է 14962 ղռ. 72¹/₂ կոպ. մուտք: Նոյնպէս այդ տեղից երևումէ, որ այդ մուտքը (որը և դրամագլուխն է կազմել) եղել է պ. Աղաւէլ Յովսէփեանի և տիկ. Հեղինէ Տէր-Օհանեսանի ջանքերով, որոնք Բագու են հանգանալիւ ալդ գումարի մեծ մասը:

Թէ յետոյ ինչ է եղել, աւելացել, պակասել է—յայտնի չէ և մինչև այսօր էլ դեռ ընկերութիւնը հաշիւ չէ տուել: Այսքան յայտնի է, որ ներկայումս շատ անախաճնքի դրութեան մէջ է գտնուում, նաև համարեա բոլոր գործերը կանգ են առել: Տարուց աւել է, որ նա ոչ մի մուտք չէ ունեցել, բացի անդամավճարներից, որոնք չեն գանձուած ամբողջութեամբ անցեալ տարի, և չէ գանձուել բոլորովին այս տարի:

Նոյնպէս, թէ և ցաւալի է յիշել, ընկերութիւնը դադարեցրել է իւր նպաստը տալ դպրոցին այս տարի և հոգաբարձութեան ու ընկ. բանակցութիւնները ոչ մի արդիւնք չտուին: Եթէ ընկ. նախկին ձեով չօգնէ օրիորդաց դպրոցին, նա իւր նպատակին թէ ծառայած չի լինի ըստ իւր կանոնադրութեան և թէ շատ վատ դրութեան մէջ դրած կլինի դպրոցները, քանի որ հասարակութիւնը անկարող կըլինի հոգալ և լրացնել երկու դպրոցների բիւդջէն:

Համոզուած եմ, որ ընկերութիւնը կարող էր աւելի մեծ գործեր կատարել, իրականացնել իւր ծրագիրը, եթէ նա գործէր եւանդով և կանոնաւոր կերպով: Ժամանակ է որ ընկ. սկսի իւր ընդհատուած գործունէութիւնը և ձգտի իրագործել

իւր նպատակները, լաւ է ուշ քան երբէք: Եթէ այսպէս շարունակի մի տարուց յետոյ բոլորովին կը քայքայուի այդ օգտակար հիմնարկութիւնը, որը այնքան անհրաժեշտ է հասարակութեան համար:

Ռաշտում դպրոց գոյութիւն ունեցել է մօտաւորապէս 70—ական թւականներից: Սկզբներում խալիֆայական տիպի է եղել և ապա հետզհետէ փոխուել է նոր ձևի: Օրիորդաց դպրոց բացուել է 80—ական թուերին: Թէ օրիորդաց և թէ տղայոց դպրոցները մինչև վերջին ժամանակներս զետեղուած են եղել խոնաւ, մութ խցիկներում, որոնք դռնուում են եկեղեցու բակում և յանձնուում են եղել մի ուսուցչի ու վաժուճու հսկողութեան: Այդ դպրոցները մտաւոր սնունդ չտալուց բացի, աւելի վնասել են աշակերտ—աշակերտուհիների առողջութեանը: Այդպիսի գոմերում, որոնց խոնաւ պատերից ջուրը կաթկաթում է, տեղաւորելով փոկրիկներին, ընական է, որ պիտի դժուար թուար դպրոց ասած բանը նրանց, այն էլ այն ժամանակուայ պայմաններում: Ամպլամած օրերը լամպի լոյսով են պարապել երեխաները:

Այս սպանիչ դրութիւնից աշակերտուհիներին ազատել է պ. Աղաւէլ Յովսէփեանը, տեղացի մի վաճառական, որ իւր հաշուով շինել է օրիորդաց Մարիամեան դպրոցը և նրանց փոխադրել այնտեղ:

Տղաները մնում են դարձեալ մինչև օրս էլ դեռ իրանց նախկին խարխուլ դպրոցում, որը աւելի շուտ գոմի է նման քան դպրոցի:

Քանի տարի է փողեր են հանգանակուում տղաների համար դպրոցական շէնք կառուցանելու, բայց մինչև այժմ ոչ ձեռնարկուած է այդ գործին և ոչ հաւաքուած գումարների հաշիւն է տրուած, հոգաբարձութեան անհոգութեան շնորհիւ: Տղաների համար էլ անցեալ տարուանից պ. Ա. Յորդանանեանն է ձեռնարկել մի դպրոց շինելու, որը այս տարի նոր պատրաստ կը լինի, որով և ազատուած կը լինեն աշակերտներն էլ իրանց սպանիչ պայմաններից:

1898 թուականից օրիորդաց դպրոցի կառավարութիւնը անցնում է կանանց բարեգործ. ընկ. ձեռքը և դնում քիչ թէ շատ բարուք պայմանների մէջ: Տղայոց դպրոցը մնում է հոգաբարձութեան ձեռքի տակ, որը իր անտարբերութեամբ հասցնում է նրան քայքաման: 1903 թուի սկզբում այդտեղ կային 11 աշակերտ յանձնուած մի ուսուցչի խնամքին:

1903/4 ուսումնական տարուց նոր տղայոց և օրիորդաց դպրոցները միացնում են և յանձնում մի ուսուցչական խմբի կա-

ռավարութեան, որով հիմք է տրուում փոքր ի շատէ կանոնաւոր ընթացքի, մշակուած է նոր ծրագիրը և այլն:

Այժմ տղայոց և օրիորդաց դպրոցներն ունեն 6 տարուայ դասընթաց (գ. հիմն. դաս.). յաճախում են մօտ 70 աշկերտ-աշակերտուհիներ, որոնց դասաւանդում են 5 ուսուցիչներ և ուսուցչուհիներ: Ապագայում կաւելանայ աշակերտ-աշակերտուհիների թիւը և կըարձրանայ դպրոցների դասընթացը:

Ս. Գրիգորեան

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆ ԱՆԳԼԻՍՅՈՒՄ

I

Այս յօդուածիւ նպատակն է ծանօթացնել հայ ընթերցողներին ընտրողական այն կարգերի և սովորութիւնների հետ, որոնք գոյութիւն ունին Անգլիայում. միևնոյն ժամանակ ընտրողական իրաւունքի համառօտ պատմութիւնն է արւում այստեղ:

Պատգամաւորական կամ երեսփոխանական պետութեան մէջ իրաւունքի ամենագլխաւոր կողմը քաղաքական ընտրողական իրաւունքն է, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ, «որեւէ ազգի գերագոյն կամքին մասնակցելու իրաւունք»: Այժմ բոլոր քաղաքակիրթ ազգերի մէջ տարածուած ու ընդունուած է այդ իրաւունքը: Պետութեան մէջ այդ իրաւունքը վայելող անձինք կոչուած են քաղաքական ընտրողներ, որոնց համագումարից կազմուած է իրաւաբանական ազգը¹⁾:

Մասնաւորելով խօսքերս Անգլիայի նկատմամբ պէտք է ասել, որ այստեղ քաղաքական ընտրողներն համալքներն են, իսկ իրաւաբանական ազգը՝ համայնքների ժողովը:

Համայնքների ժողովը ընտրովի պատգամաւորներից է բաղկացած, ուստի նախ տեսնենք, թէ ովքեր կարող են ընտրող ձայն ունենալ և ինչ են ընդհանրապէս ընտրութեան գլխաւոր

¹⁾ Основныя начала государственнаго права Эсменъ. I, 174.